ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2020 թվականի № Ա
ք. Երևան

«ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՐՈՏԱՆ-1» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0624 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հոկտեմբերի 31-ի №405Ա որոշմամբ «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Որոտան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչը չի կատարվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի մարտի 1-ը,

բ) Ընկերությունը 2020 թվականի փետրվարի 28-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն չանցած նախագծային փաստաթղթեր, ինչը փաստվել է Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 8-ի №237Ա որոշմամբ և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, Նախագծի

Հանձնաժողով ներկայացման ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը, սակայն Ընկերությունը նշված ժամկետում ևս չի ներկայացրել Նախագիծը,

գ) Հանձնաժողովը 2020 թվականի նոյեմբերի 3-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ԼԷ №0624 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի նոյեմբերի 3-ի №ԳԲ/34.3-Մ2-12/4487-2020 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը սույն թվականի նոյեմբերի 6-ի №Շ-35 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի հունիսի 24-ի №Շ-24 գրությամբ Կայանի աշխատանքային նախագիծը պետական համալիր փորձաքննության իրականացման նպատակով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի ուսումնասիրությանը, սակայն մինչ օրս համալիր փորձաքննության պատասխանը չի ստացվել,

ե) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացվելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու հիմքով կասեցնել Ընկերության ԼԷ №0624 լիցենզիայի գործողությունը՝ մինչև կասեցման պատճառի վերացումը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
նոյեմբերի 2020թ.